ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հոկտեմբերի 2024 թվականի № 410-Ա

ԼՈՒՍԻՆԵ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածի, 164-րդ հոդվածի 1-ին մասի, հիմք ընդունելով *Լուսինե Գալստյանի*՝ 2024 թվականի հոկտեմբերի 16-ի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Ծաղկաձորի բժշկական ամբուլատորիա» պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրեն ***Լուսինե Գալստյանին*** տրամադրել 2024 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդից տասը աշխատանքային օր՝ 2024 թվականի հոկտեմբերի 21-ից նոյեմբերի 1-ը ներառյալ:

2. ***Լուսինե Գալստյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Ծաղկաձորի բժշկական ամբուլատորիա» պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել ընկերության հաշվապահ ***Եսթեր Թադևոսյանի*** վրա:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Ծաղկաձորի բժշկական ամբուլատորիա» պետական փակ բաժնետիրական ընկերության հաշվապահ ***Եսթեր Թադևոսյանին*** և «Հրազդանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն ***Կարեն Սահակյանին*** ապահովել «Ծաղկաձորի բժշկական ամբուլատորիա» պետական փակ բաժնետիրական ընկերության սպասարկման տարածքի բնակչության առաջնային բժշկական օգնության և սպասարկման իրականացումը՝ «Հրազդանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության համապատասխան մասնագետի *(ընտանեկան բժիշկ՝ Իրինա Խեչոյան)* կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ա. ԱԱՀԱԿՅԱՆ**

2024 թվականի հոկտեմբերի 17
ք. Հրազդան